ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆԻ ՁԵԿՈՅՑԸ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆԸ

(15 սեպտեմբերի, 2014 թ.)

Վեհափա՛ռ Տէր,

Հոգեւոր հայրեր,

Յարգարժան դասախօսներ,

Սիրելի՛ սաներ եւ հիւրեր,

Ողջունում ենք Ձեր ներկայութիւնը Գէորգեան հոգեւոր ճեմարանի հանդիսութիւնների դահլիճում 2014-2015 ուսումնական տարուայ բացման հանդիսաւոր արարողութեան առիթով: Այս օրն ամենասպասուածներից մէկն է ոչ միայն Ճեմարանի, այլեւ Մայր Աթոռի միաբանութեան կեանքում. թէ՛ ուսանողի եւ թէ՛ մանկավարժի համար այն ներշնչման մի իւրայատուկ առիթ է, նոր մեկնակէտ:

Սակայն այս պահին ամենամեծ բերկրանքն Ամենայն Հայոց Հայրապետն է ապրում, ով իր բոլոր ծրագրերն ու գաղափարներն այս կարեւոր հաստատութեան առաքելութեան հետ է կապում:

Ճեմարանը, իբրեւ կրթական հաստատութիւն, ունի աւանդոյթներ, որ յաւիտենապէս անշարժ են: Այս իմաստով այն պահպանողական է, սակայն միեւնոյն ժամանակ եզակի կրթական հաստատութիւն է, որի իւրաքանչիւր տարին խոստանում է լինել անցածից տարբեր, նոր՝ բառի ամենալայն իմաստով, որովհետեւ Ճեմարանը մի իւրայատուկ առաքելութեան կրող է, որն իրականացնելու համար անհրաժեշտ է յաղթահարել որոշակի խոչընդոտներ, որոնք փոխւում են ժամանակի հետ: Ուստի ամէն տարի Ճեմարանի համար մի նոր ժամանակի սկիզբ է:

Այս տարի նոյնպէս խոստանում է մի նոր ուղի Ճեմարանի համար, որն իր փորձառութեամբ անցածի կրկնութիւնը չէ, սակայն անցած յանձնառութեան վերահաստատումն է:

Այս տարի Գէորգեան ճեմարանի համար իւրայատուկ է լինելու նաեւ այն իմաստով, որ լրանում է հաստատութեան հիմնադրման 140-ամեակը: Հետեւաբար ուսումնական այս տարեշրջանը, ոչ միայն վերարժեւորման առիթ պիտի

լինի Ճեմարանի առաքելութեան համար, այլեւ նոր ներշնչման հնարաւորութիւն ընձեռի մեզ՝ լինելու այն ինքնութեան կրողները, որոնք կերտել են այս հաստատութեան փառքի էջերը:

Գէորգեան ճեմարանը 2014-2015 ուսումնական տարին սկսում է տեսչական հետեւեալ անձնակազմով.

Տեսուչ՝

Տ. Գէորգ եպս. Սարոյեան,

Փոխտեսուչ՝

Գէորգ Մաղոյեան,

Վերակացուներ՝

Տ. Վաչէ աբդ. Մկրտչեան,

Տ. Գաբրիէլ քինյ. Վարդանեան,

Տիգրան սրկ. Յակոբեան,

Գարեգին սրկ. Սողոմոնեան,

Գործավար-քարտուղարներ՝

Տ. Ղեւոնդ քինյ. Տեօմկին,

Ռոբերտ Շահբազեան:

Ամառային արձակուրդներ եւ նախապատրաստութիւն ընդունելութեան քննութիւններին. Ամառային երկամսեայ արձակուրդները Ճեմարանի համար վերազինման շրջան էին՝ նոր ուսումնական տարուայ առաջադրանքը հաւուր պատշաճի իրագործելու համար:

Ամառային արձակուրդների ընթացքում մասնաւոր դասընթացներ կազմակերպուեցին Գէորգեան ճեմարանի եւ Վազգէնեան դպրանոցի այն սաների համար, որոնք որոշ առարկաներից ցածր առաջադիմութիւն էին արձանագրել. արդիւնքները յուսադրող են, ուսանողների վերաբերմունքի մէջ արձանագրուել է դրական փոփոխութիւն:

Այս շրջանում Ճեմարանի իրաքանչիւր ուսանող նշանակուեց որեւէ եկեղեցում՝ ծիսական հմտութիւնները զարգացնելու, հովուական կեանքի նրբութիւններին ծանօթանալու, վերջապէս օգտակար լինելու թեմի աշխատանքներին:

Ինչպէս նաեւ մի խումբ ուսանողներ մասնակցեցին «Բազէ» ճամբարին, գրանցեցին դրական արդիւնքներ, իսկ ոմանք Վորլդ Վիժըն կազմակերպութեան նախաձեռնած ճամբարների հոգեւոր պատասխանատուութիւնն ստանձնեցին. այսօր մեզ հետ են կազմակերպութեան ծրագրի ղեկավարները, որոնք ցանկութիւն են յայտնել յաւարտ հանդիսութեան՝ պաշտօնապէս յանձնելու իրենց շնորհակալագրերը:

2014-2015 ուսումնական տարուան ընդառաջ՝ անցած երկու ամսուայ ընթացքում Գէորգեան ճեմարանը պատրաստուեց ընդունելութեան քննութիւններին: Այդ գործընթացը, եթէ առաջ վերաբերում էր միայն Գէորգեան ճեմարանին եւ Վազգէնեան դպրանոցին, ապա վերջին տարիներին առաջադրանքն աւելի է ծաւալուել, ուսանողներ են հաւաքագրուել ինչպէս Հառիճի Թ-դբանոցեան ընծայարանի, այնպէս եւ Քահանայից պատրաստման լսարանի համար: Գործունէութեան նոր ասպարէզների ի յայտ գալու հանգամանքը խօսում է այն մասին, որ ընդարձակուել է Ճեմարանի առաքելութիւնը, որը բնականաբար փաստում է, թէ հասարակութեան մէջ աճել է հոգեւորի հանդէպ պահանջը:

Այս պահանջին ընդառաջ՝ Նորին Սրբութեան օրհնութեամբ Ճեմարանում հիմնուեց **Հասարակութեան հետ կապերի եւ քարոզչութեան** գրասենեակ, որի առաջադրանքն է հոգեւոր կրթութեան քարոզչութեամբ զբաղուել Հայաստանի՝ յատկապէս հեռաւոր շրջաններում:

Ուսանողների հաւաքագրման երեւոյթը բաւական հին աւանդոյթ է, որի մասին առաջին պաշտօնական վկայութիւնները հանդիպում են Գէորգեան ճեմարանի բացման առընչութեամբ: Նոր բաժինը, հետեւաբար, նպատակ ունի ոչ միայն հոգեւոր կրթութեան քարոզչութեամբ զբաղուելու, այլեւ Ճեմարանի առաքելութեանը շատ բնորոշ այդ աւանդոյթը վերականգնելու:

Ի գործ են դրուելու ինչպէս կենդանի եւ անմիջական շփումները, այնպէս եւ ժամանակակից տեխնիկական միջոցները, ուշադրութիւն է դարձուելու նաեւ սփիւռքի լսարանի վրայ:

2014-2015 ուսումնական տարում Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատութիւններում քննութիւն է յանձնել շուրջ 88 սան. 60-ը՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանի, 28-ը՝ Հառիճի Թ-դբանոցեան ընծայարանի, 15 դիմում էլ ստացուել է Քահանայից պատրաստման լսարանի համար:

Այս տարի Ճեմարանի եւ ընծայարանի քննութիւնների որակը բարելաւուել էր, քանի որ նախապատրաստական դասընթացներ էին կազմակերպուել դիմորդների համար, որը յաւելեալ հնարաւորութիւն ընձեռեց տեսչութեանը ծանօթանալու ապագայ սաների հետ, յատկապէս գաղափար կազմելու նրանց կարողութիւնների եւ ընտանեկան հանգամանքների մասին, ուղղորդելու, որ բարեյաջող յանձնեն քննութիւնները:

Գէորգեան ճեմարան է ընդունուել 45 սան, որոնցից 15-ը՝ Վազգէնեան դպրանոց, իսկ միւսները տեղաբաշխուել են Ճեմարանի Ա1 եւ Ա2 լսարանների միջեւ:

Հառիճի Թ-դբանոցեան ընծայարան է ընդունուել թուով 22 սան, 15-ը՝ 10-րդ դասարան, 8-ը՝ 11-րդ դասարան, եւ 1-ը՝ 12-րդ դասարան:

Քահանայից պատրաստման լսարան է ընդունուել թուով 12 սան:

Նկատի ունենալով, որ անցեալում տեսչի տեղեկագրի մէջ հրատարակում էր, թէ որ թեմից քանի ուսանող է սովորում Ճեմարանում՝ որոշեցինք մեր զեկուցման մէջ հետայսու ընդգրկել այդ տուեալները, որոնք մեզ նաեւ կը յուշեն, թէ յատկապէս որ տարածաշրջանում պէտք է աշխուժացնել քարոզչական աշխատանքը: Դատկերը հետեւեալն է՝

Հ/հ	Թեմ	ԳՀՃ եւ ՍՎԴ	ՔՊԼ	ՀԹԸ
1.	Արագածոտնի թեմ	6	2	1
2.	Արարատեան Հայրապետական թեմ	15	1	9
3.	Արթիկի թեմ	1	-	1
4.	Արմաւիրի թեմ	20	1	9
5.	Արցախի թեմ	-	-	1
6.	Գեղարքունիքի թեմ	1	1	2
7.	Գուգարաց թեմ	1	1	3
8.	Կոտայքի թեմ	3	-	-
9.	Շիրակի թեմ	2	2	2
10.	Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմ	1	-	-
11.	Սիւնեաց թեմ	-	1	1
12.	Վայոց ձորի թեմ	-	1	-
13.	Վրաստանի Հայոց թեմ	2	-	1
14.	Տաւուշի թեմ	1	-	-

Նոր նշանակումներ Գէորգեան ճեմարանում. Նորին Սրբութեան բարձր տնօրինութեամբ այս տարի Ճեմարանում եւս հինգ սարկաւագ նշանակուեց. Վահան սրկ. Սահակեանը եւ Գոռ սրկ. Գիւրջեանը՝ **Հասարակայնութեան հետ կապերի եւ քարոզչական** բաժնում, Գագիկ սրկ. Յովհաննիսեանը եւ Արթուր սրկ. Վարդանեանը՝ Գործնական ասպուածաբանութեան ամբիոնում, առաջինը՝ եկեղեցական երաժշտութեան եւ սոլֆեջիոյի, երկրորդը՝ հովուական խնամքի գծով, իսկ Լեւոն սրկ. Սահակեանը՝ Ասպուածաշնչագիտութեան ամբիոնում: Բացի նրանից, որ սարկաւագները կցուել են որոշակի ամբիոնների, նրանց նաեւ յանձնարարուել է ուսումնասիրութիւններ անել մասնաւոր նիւթերի շուրջ:

Արթուր սարկաւագ Վարդանեանին է յանձնուել նաեւ Գէորգեան ճեմարանի բոլոր միջոցառումների կազմակերպման աշխատանքը, բարձր լսարանի սանե-

ին սարկաւագական քննութիւններին նախապատրաստելու պարտականութիւնը: Այս իմաստով՝ սա նոյնպէս նոր հաստիք է Գէորգեան ճեմարանի կեանքում, որը դրականօրէն է ազդում եւ ուսման որակի, եւ հաստատութեան համակարգուած ղեկավարման վրայ:

Միջբուհական համագործակցութիւն, կապեր. Այս տարի Մոսկուայի հոգեւոր ակադեմիայի ռեկտորից խնդրանք ստացուեց՝ ընդառաջելու հայրաբանութեան եւ գերմաներէնի դասախօս Սերգէյ սարկաւագ Պանտելէեւին՝ եւս մէկ ամսով խորացնելու գրաբարի իր գիտելիքները, ինչպէս նաեւ ակադեմիայի ասպիրանտ Արտեմիյ Բլագովեշչենսկու համար հայոց լեզուի դասեր կազմակերպելու: Ուրախութեամբ պէտք է արձանագրել, որ Հայոց Եկեղեցու ժառանգութեան հանդէպ հետաքրքրութիւնը դրսում աստիճանաբար աճում է. Մայր Աթոռի միջեկեղեցական բաժնի տնօրէն Յովակիմ եպս. Մանուկեանի միջոցով ստացուել է Կրակովի Կարդինալ Ջինիշի դիմումն առ այն, որ ընդառաջենք իր իշխանութեան տակ պաշտօնավարող Հայր Միրոսլաւին՝ սովորելու գրաբար եւ արդի հայերէն: Հայր Միրոսլաւն արդէն մեզ հետ է, համապատասխան դասընթացները կազմակերպուած են:

Նոր տարուան ընդառաջ՝ համապատասխան պայմանաւորուածութիւններ են ձեռք բերուել արտասահմանեան հեղինակաւոր այլ կրթական հաստատութիւնների հետ՝ Ճեմարանում մասնաւոր գիտաճիւղերին նուիրուած դասընթաց անցկացնելու համար, այդ թւում՝ ա. Քոլլեջվիլի Ս. Յովհաննէս համալսարանի պրոֆեսոր Կոլումբիա Ստիւարտի, բ. Վենետիկի Ֆոսքարի համալսարանի եւ Պապի Արեւելեան ինստիտուտի պրոֆեսոր Լեւոն արք. Զեքիեանի, գ. Էոլանգենի համալսարանի Ուղղափառ եկեղեցիների ամբիոնի վարիչ Խաչիկ Գազերի եւ այլոց հետ:

Միջբուհական այս յարաբերութիւնները, բնականաբար, աւելի ընդլայնում են Գէորգեան ճեմարանի առաքելութիւնը՝ նոր հեռանկարներ բացելով նրա գործունէութեան համար:

Հրատարակութիւններ. Գէորգեան ճեմարանն ամառային արձակուրդների ընթացքում «Սերմնացան» մատենաշարով հրատարակութեան ներկայացրեց ամբիոնի ասիստենտ սարկաւագների՝ Ատոմ Ղարագեօզեանի եւ Մարտուն Շահվերդեանի պատրաստած՝ Գարեգին սրկ. Յովսէփեանցի «Եկեղեցին եւ աղքատների խնամատարութեան գործը» հոգեշահ ուսումնասիրութիւնը, ինչպէս նաեւ Սուրբ Գրքի դասախօս Տ. Գաբրիէլ քհնյ. Վարդանեանի յունարէնից թարգմանած՝ դոկտոր Գէորգիոս Ֆիլիասի «Եկեղեցական հռետորութիւն եւ ժամանակակից աստուածաբանական խօսքի փոխանցում» դասագիրքը:

Ճեմարանում նշանակուած սարկաւագների՝ մէկ տարի համապատասխան ամբիոնում անցկացրած ժամանակը տուել է իր բարի պտուղները:

Գէորգեան ճեմարանի ամբիոնների կողմից մինչեւ յունուար հրատարակութեան է ներկայացուելու 10 դասագիրք: Բացի այս, իւրաքանչիւր բուհի գործունէութեան կարեւորագոյն ցուցանիշներից մէկը համալսարանական մակարդակի գիտական արդիւնքն է: Եւ այս կապակցութեամբ յոյժ ուրախալի է, որ դասագրքերից բացի, հոգեւոր-կրթական հասարակութիւնների դասախօսները հրատարակութեան են ներկայացնում նաեւ գիտական մենագրութիւններ, որոնցից շատերը կարեւոր նուաճումներ են հայագիտութեան բնագաւառում:

Հ/հ	Հեղինակ	Վերնագիր
1.	Գէորգ եպս. Մարոյեան	Մինաս Բէրբէրեան. Նամականի
2.	կազմ. եւ հրատ. պատրաստեց Գ. եպս. Մարոյեան	«Արարատի» ժառանգութիւնը, մասն Ա., Կարապետ Կոստանեանց
3.	կազմ. եւ հրատ. պատրաստեց Գ. եպս. Մարոյեան	«Արարատի» ժառանգութիւնը, մասն Բ., Գարեգին Յովսէփեանց
4.	Տ. Նշան աբեղ. Հմայեակեան	Պօղոսագիտութեան ներածութիւն
5.	Աւագեան Անահիտ	Հայրաբանութիւն. Նախանիկիական շրջան
6.	Բաղդասարեան Ալեքսան	Տրամաբանութիւն
7.	Բարխուդարեան Ալվարդ	Հին յունարէնի ձեռնարկ
8.	Բարսեղեան Պարգեւ	Կրօնների պատմութիւն, հատ. Ա.
9.	Գիւրջինեան Դաւիթ	Հայոց լեզու, հատ. Գ.
10.	Գնունի Արտակ	Աստուածաշնչի հնագիտութիւն
11.	Գրիգորեան Վաչագան	Հայ նոր գրականութեան քրեստոմատիա, հատ. Ա., Բ., Գ.
		Հայ նոր գրականութեան պատմութիւն
12.	Յարութիւնեան-Տոմա Գոհար	Ծիսական աստուածաբանութիւն,
		Սրբախօսութիւն
13.	Յովհաննիսեան Պետրոս	Հայ ժողովրդի պատմութիւն
	Յարութիւնեան Աւետիս	
14.	Մաղոյեան Գէորգ (աւագ)	Շիրվանզադէ, Նամականի

15.	Մաղոյեան Արշակ	Ա. Մեն, Աստուածաշնչագիտութեան ներածութիւն (թարգմ. ռուս.)
16.	Մաղոյեան Գէորգ	Դրուագներ հայ բանահիւսութեան
17.	Մարգիրոսեան Արփի	Արփասահմանեան գրականութիւն, հատ. Ա.
18.	Միրումեան Կարլեն	Հայ փիլիսոփայական մտքի պատմութիւն, հատ. Ա.
19.	Նաւասարդեան Արմինէ	Ինֆորմատիկա
20.	Պօղոսեան Նորայր, Պարոնեան Նաիրա	Գրաբարի ձեռնարկ
21.	Սարկիսովա Միլանա	Ռուսաց լեզուի քրեստոմատիա
22.	Վաղարշեան Արթուր	Կանոնագիտութիւն
23.	Վարդանեան Կամօ	Գործնական հոգեբանութիւն
24.	Տէր-Վարդանեան Գէորգ	Ձեռագրագիտութիւն
25.	Քալաշեան Անդրիս	Եկեղեցու պատմութիւն, հատ. Ա.
26.	Քեռսէեան Յակոբ	Հայ եկեղեցական մատենագրութիւն, հատ. Ա.

Ուսումնական կեանք. Այս տարի իրականացում է Գէորգեան ճեմարանի կրթական բարեփոխման երկրորդ փուլը: Գիրառութեան մէջ է մտնում մագիստրատուրայի մասնագիտացուած ծրագիրը, որը չորս հոսք է ենթադրում՝ Աստուածաշնչագիտութիւն, Դաւանանք, Պատմական աստուածաբանութիւն եւ Գործնական աստուածաբանութիւն: Ուսումնական վերջին ժողովի որոշումը եղաւ, որ միայն լիարժէք վեցամեայ կրթութեան պարագային ճեմարանականը կարող է առաջադրուել ամուսնացեալ կամ կուսակրօն քահանայական ձեռնադրութեան համար: Ճեմարանի առաջադրանքն է գալիք տարուայ ընթացքում համապատասխան հիմքերի վրայ դնել յիշեալ հոսքերի ուսումնական գործընթացը, որպէսզի սաներն իրապէս կարողանան մասնագիտանալ տուեալ ուղղութեամբ:

Այս հոսքերի առկայութիւնը ենթադրում է, որ Ճեմարանը պէտք է ապահովի նաեւ երրորդ աստիճանի կրթութիւն՝ ասպիրանտուրա: Նորին Սրբութեան օրհնութեամբ՝ ասպիրանտուրա բացելու աշխատանքի սկիզբը դրուել է: Ճեմարանում նշանակուած սարկաւագները լինելու են առաջին ուսանողները, որոնցից իւրաքանչիւրի համար շուտով անհատական ծրագիր կը պատրաստուի համապատասխան ամբիոնների կողմից, որով եւ կառաջնորդուեն նրանք:

140-ամեակին նուիրուած միջոցառումներ. Գէորգեան ճեմարանի 140-ամեակի առիթով տեսչութիւնը մի քանի միջոցառում է ծրագրել, որոնք կիրականացուեն 2014-2015 ուսումնական տարուայ ընթացքում:

ա. Թարգմանչաց տօնին միջոցառում՝ նուիրուած 140-ամեայ յոբելեանին,

բ. Ճեմարանի 140-ամեակին նուիրուած յուշակոթողի բացում,

գ. Ճեմարանի 140-ամեակին նուիրուած գիտաժողով, որի նիւթերը կը հրատարակուեն «Գէորգեան ճեմարան» գիտական տարեգրքում,

դ. Գէորգ Դ. Մեծագործ Կաթողիկոսի յուշարձանի բացում,

է. 2014-2015 ուսումնական տարուայ դասագրքերի հրատարակութիւնները կը ձօնուեն Գէորգեան ճեմարանի 140-ամեակին,

զ. Հրատարակութեան են պատրաստում ա. «Ճեմարանի տեսուչները» ժողովածուն, բ. **Վ. Մանկունու**, «Գէորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս», գ. **Մ. Աբեղեանի**, «Գէորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս. Կեանքը, գործունէութիւնը». գրքերը,

է. Ճեմարանի մասին արխիւային փաստաթղթերի եւ յուշերի հրատարակութիւն,

ը. Վաչէ եւ Թամար Մանուկեան Մատենադարանի տնօրէն, Ճեմարանի Հայոց Եկեղեցու պատմութեան դասախօս Տ. Արարատ քհնյ. Պօղոսեանի հետ «Էջմիածին» ամսագրում հիմնադրել ենք յատուկ էջ՝ «Ճեմարան եւ ճեմարանականներ. Փաստեր եւ վկայութիւններ», որտեղ հրատարակուելու են վաւերագրեր յայտնի ճեմարանականների մասին, նրանց գրած նիւթերը, որոնք հնարաւորութիւն կը տան ապագայում Ճեմարանի լիարժէք եւ գիտական պատմութեան շարադրման համար:

Վեհափա՛ռ Տէր, ամառային արձակուրդների ընթացքում ոչ միայն տեսչութիւնը շարունակեց իր աշխատանքը, այլեւ դասախօսները: Սա վկայում է այն մասին, որ Ճեմարանի ներսում կայ առաքելութեան խոր գիտակցութիւն: Դասախօսները շարունակեցին իրենց աշխատանքը դիմորդների համար կազմակերպուած նախապատրաստական դասընթացները վարելու, դասագրքեր գրելու, անգամ դիմորդներ հաւաքագրելու ուղղութեամբ: Սա Ճեմարանի մեծագոյն ձեռքբերումներից մէկը պէտք է համարել, որն օրինակելի է սաների համար, քանի որ դաստիարակում է նրանց մէջ առաքելութեան բարձր գիտակցութիւն, յանձնառութեան ոգի, առաջադրանքի համար միաւորուելու կամք:

Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում Գէորգեան ճեմարանի դասախօսներին այս անսակարկ նուիրումի համար, մանաւանդ, որ իրենց նախաձեռնութեամբ են յանձն առել եւ ոչ թէ մեր մասնաւոր թելադրանքով: Յատկապէս գնահատանք ենք յայտնում Ճեմարանի փոխտեսուչ տիար Գէորգ Մաղոյեանին իր անդուլ եւ հետեւողական աշխատանքի համար:

Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

Գեորգեան հոգևոր ճեմարանի հին շէնքը

Ճեմարանն այսօր

Վեհափա՛ռ Տէր, Գէորգեան ճեմարանի այսօրուայ յաջողութիւնները, առանց աւելորդ համեստութեան, կարելի է համեմատել ԺԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի ամենածաղկուն շրջանի հետ: Դրա վառ ապացոյցն է հոգեւորականների՝ նոր ժամանակների սերունդը, որի գործունէութեան մասին ամէնուր դրական գնահատականներ են հնչում:

Ձերդ Սրբութեան բացառիկ ուշադրութեան եւ հեփեւողականութեան շնորհիւ վերակենդանացել են Ճեմարանին յատուկ աւանդոյթները, այսօր մեր շրջանաւարտներից շատերը ուսանում են եւրոպական լաւագոյն համալսարաններում, հետեւում են դոկտորական ուսման՝ հետազօտութեան նիւթ դարձնելով Հայ Եկեղեցու պատմութիւնն ու ժառանգութիւնը, դրանով նպաստելով նաեւ հայագիտութեան զարգացմանը Եւրոպայում: Բնականաբար, սրա վերջնական նպատակն է Գէորգեան ճեմարանը դարձնել գիտաուսումնական հաստատութիւն, կամ, աւելի ճիշտ, շարունակել այն հայագիտական դպրոցի աւանդոյթները, որոնք տուեցին այնպիսի նշանաւոր դէմքեր, ինչպիսիք են Գարեգին Յովսէփեանը, Կարապետ Տէր-Մկրտչեանը, Երուանդ Տէր-Մինասեանը, Կոմիտաս Վարդապետը, Մ. Աբեղեանը, Ն. Ադոնցը, Հ. Մանանդեանը եւ այլ նշանաւոր ճեմարանցիներ:

Մեր այսօրուայ պայմանները նոյնիսկ մի քանի անգամ գերազանցում են այն ժամանակուայ պայմաններին. սա, բնականաբար, աւելի է պարտաւորեցնում մեզ այն կոչման հանդէպ, որ յանձն ենք առել:

Հետեւաբար, այս տարի Մայր Աթոռի բոլոր կրթական հաստատութիւնների առջեւ խնդիր ենք դնելու մէկ ասպիճան բարձրացնել ուսման եւ կարգապահութեան հանդէպ պահանջը՝ առանցքային տեղ յատկացնելով ուսանողի հոգեւոր նկարագրի կերտմանը:

Վեհափա՛ռ Տէր, Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատութիւնների անունից վերստին մեր որդիական երախտագիտութիւնն ենք յայտնում Ձերդ Սրբութեանը այն հայրական վերաբերմունքի համար, որ տածում էք դէպի հոգեւոր մեր կրթարանները, իսկ աւելի ճիշտ՝ դէպի դպրութիւնն ու գիտութիւնը, որպէս ատուածճանաչողութեան ճանապարհ, որով դարեր շարունակ քայլել են մեր Եկեղեցու հայրերը՝ հաւատարմօրէն առաջնորդել հայ ժողովրդին «դէպի լոյս եւ կեանք»: